




# ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

Գիտական, Գրագիտական, Առևտրագիտական  
և Մանկավարժական



1902 ՕԳՈՍՏՈՍ 31 — ԹԻԻ 29

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

Տպարանս փոխադրուած է Պապր ալի  
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

8-10

1857

ՀԱՅԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՈՒՐՈՒՄ

Պատմություն և Գրականություն

և Գրականություն



1857 թվականի 38 համար

Երևան, 1857 թվական

Հայկապետություն և Գրականություն

Հայկապետություն և Գրականություն 38 համար

Գ. Բաղդասարյանի և Գ. Բաղդասարյանի հրատարակած



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

هزارايداق

HANRAKIDAGUE

ՏՈՒՆՕՐԵԱՅ

مجموعه علوم

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 29

I ՍԵՊՏԵՄԲԵՐ 1902

## ՇԱՔԹՈՒՆ ՕՐԵՐԸ

Պարսկանութիւնն է Երկուաբբին,  
Յամա՛ն՝ անոր պէս, անոր պէս մըբին.  
Մարդ՝ ուր որ ըլլայ՝ պէտք է աշխատի,  
Երկունքի ճիշն միշտ Երկուաբբի:

Երեքաբբին՝ հո՛գն է պալ ու սրտում,  
Չիտար հոգիին յոյսեր կամ խոսում.  
Չուր կը փորձէ մարդը ըլլալ ուրախ, շէն,  
Ամէն բան այն օր ծանրը կը ճնշեն:

Ուսին վրայ քեւե՛ր՝ անհուն ձանձրոյթի՝  
Ցաւի չոր կմախքն է Չորեքաբբի.  
Խոհեռու անդունդն ինկած անյասակ,  
Սիրեն օղիկ օղիկ կ'ըլլայ շարունակ:

Թեթևութեան շունչ մ'ունի Հինգաբբին,  
Այգուն հետ տակաւ ցոլեր կը փքին,  
Մըտքի մըշուտին վրայ տարտափոհէ՛ն՝  
Յոյս ու կեանք ոսկի շողեր կը ծարեն:

Ուրբաբն է խնկութիւն, խայտա՛նք իր վրան,  
Բայց խոստումի պէս բան մ'ունի բերան.  
Մեզի ցոյց կուտայ հեռուէն հեռու՝  
Նախագգացումը անուշ յոյսերու:

Աւելոյժն է Շ.սք.սք, վա՛ն՝ զինչ պատանի,  
Սիրեն յուզումներու մեջ կը տատանի,  
Չեռնին մեջ բըռներ ոսկի բանակի,  
Կը բաճայ սիրոյ ծովակն անակի:

Իսկ Կիրակի՛ն է միշտ ամենեւեմ՝  
Լոյս տաքայութեան անուշ գրկարան,  
Ծեր մանուկ՝ այն օր շէն շո՛ղ ու պայծառ  
Կը հառաչայրեն ամենքն հաւասար:

Թող շաբաթուան օրեր, լըռիկ, ներդաւեակ,  
Երբան, գոն բարով՝ տարին տարունա՛յ.  
Բայց Կիրակիին սուրբ է յիշատակ,  
Յոյզե՛ր կը արսկէ արեւմուտ յասակ:

1902 Մայիս 7

Մ. Ա. ԹՈՒՐԵԱՆ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

## ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆԻԹԻԻՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործերու սովորութիւններ. անաւանոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Բ. — ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

33. ԱճՆԵՐԵԼԻ ԿԵՏԱՐԲՐՈՒՄԻՆ

Սերելի փոքրիկ աղջիկներ, չգիտեմ ինչո՞ւ համար շատ կը փափաքիք ուրիշներու մանաւանդ ձեր ընկերներու գործերուն ինչպէս և ինչու համար լինելը գիտնալ: Ասիկա ձեզ ինչ օգուտ ունի, օրինակի համար, երեւան հասնել թէ ձեր ընկերուհին իր մօրմէն յանդիմանութիւն լսած է. այնպիսի բան մը որ ոչ ոք գիտէ, եւ կամ ամէնէն առաջ գիտնալ թէ ձեզմէ մէկուն ազգականին գործերը լաւ չեն երթար և բնականօրէն քաղաքէն պիտի մեկնի: Այս տեղեկութիւնները առնելու համար հարկ եղաւ հարցում հարցման վրայ ընել. դժուարութեամբ կցկտուր բառեր խել, որ չուզելով կը հաղորդէին: Թերեւս դրացիին կողովը խուզարկեցիք նամակ մը գտնելու համար, թուղթ մը որ գաղտնի կարդացիք և գիտցաք այն ինչ որ կ'ուզէք գիտնալ:

Աւելի ծաղրելի եւ շատ անգամ աւելի ամօթալի բան չկայ քան թէ այս անօգուտ անխորհուրդ կամ վտանգաւոր հետաքրքրութիւնը ինչ որ ուրիշին կը վերաբերի աւանդ մի՞ գբաղիք, համբերեցէք որ ձեզ ըսեն ձեր չգիտցածը: Հետաքրքիր պզտիկ աղջիկը ադէս մ'ե դպրոցն եւ իր տունը:

34. ԲՍՈՒՄԻՆ

Բակին մէջ ո՞վ թուղթ նետած է, ըսաւ վարժուհին: Լաւ գիտէք որ արգիլած եմ այդ: Տեսնենք ո՞վ ըրած է:

Ոչ ոք կը շարժի, որովհետեւ դպրոցականները գիտեն, որ լաւ ընկերները պէտք չէ իրարու հետ անհաշտ ըլլան:

Բայց և այնպէս փոքրիկ ձայն մը կը բարձրանայ. Շուշանին ձայնն է, որ կ'ըսէ

« Օրիորդ, Դեղձանիկը նետած է »:

Միւս բոլոր փոքր աղջիկները « Օ՜հ... » կ'ընեն տխուր զարմացումով մը: Կ'ամաչեն որ իրենց ընկերներէն մին քսու լինի, և նոյն իսկ Շուշանը շատ կը կարմրի, որովհետեւ կը հասկնայ թէ ըրածը գէշ բան մ'էր:

Այս՝ գէշ գործ մը ըրաւ: Եթէ մէկը յիմարութիւն մ'ընէլէ ետք խոստովանելու քաջութիւնը չունի, դուք լուցէք: Եթէ ընդհանուր պատիժ մը որոշուի ամէնքդ ալ հաւասարապէս կրեցէք, բայց բանասերութեան դեր մի՛ կատարէք: Քսուի դերն անարգ, գծուծ, ցած եւ արհամարհելի է: (\*)

35. ԴԱՐՁՆԱԿ ԳՈՐԾԱԿԳՈՒՄԻՆ

Շատ անգամ կը տրտնջան ընդհանուր պատժի մը դէմ, որ երբեմն կը տրուի ամբողջ դասարանին մէկ աշակերտին գործած յանցանքին համար, զոր չխոստովանիր: Եւ, սիրելի տղաքս, ասիկա անիրաւ չէ, որովհետեւ դուք իրարու գործակից եք:

Ըսէ՛ք ինձ, եթէ ձեր ընկերներէն մէկը լաւ գործ մը կատարէր ու յայտնուէր, բայց առանց գիտցուելու թէ ո՞վ ըրած է, գային ամբողջ դասարանը շնորհաւորէին, ձեզ զարմանալի կը թուէ՞ր: Ասոր համար գոհ պիտի չլինէի՞ք եւ ձեր սրտին մէջ քիչ մը հպարտութիւն պիտի չզգայի՞ք՝ իրրեւ թէ այդ բարի գործին մէջ դուք ալ մասն ունենալիք:

Լաւ ուրեմն, ինչպէս որ ձեզմէ մէկին ըրած լաւ գործին համար ամբողջ դասարանն ուրախութեամբ պիտի ընդունէր եղած պատիւը, նոյնպէս ալ յօժարակամ պիտի օգնէ յանդիմանութիւնները, ձեզմէ մեկուն սրբուած պատիւը, որ յանցանք մը գործած է եւ չխոստովանիր:

36. ԵՐԲ ԵՐԱՆԳԱՆԸ Մ'ԸՐԱԾ ԵՆ ՊԵՏԻ Ե ԽՈՍՈՎԱՆԻՆ

Փոքրիկ աղջիկ, դրօսանքի ժամանակ դու դատարանը մտար, վարժուհին պէզա-

(\*) ԵԱՆ. Ես կը կարծեմ որ հեղինակի այս գաղափարը ուղիղ մանկավարժական չէ, որովհետեւ չը յայտնել յանցաւորը կը նշանակէ քաջալերել, քանի որ ծածուկ պահելով սպառնացող պատժէն զերծ կը մնայ, իսկ ընդհանրութեան համար տնօրէնուած պատիժը կը լրիպի իր առաջադրեալ նպատակէն, այն է զգաստացնել յանցաւոր անհատը:

ներս վրայէն գիրք մ'առիր եւ թղթատելու մեծ փափաք ունէիր, յետոյ մոռցար տեղը դնել, եւ փրկ վարժուհին դասարան մտաւ, տեսաւ որ գիրքը հոն չէ. այն ատեն բարձր ձայնով կ'ըսէ, թէ պէտք է յանցաւորը խոստովանի: Քու ընկերուհիներդ առնելէ ան-  
շաճ են, բայց բարի լինելուն համար չեն աշխատիր դքսէ մասնանիշ ընել: Դու բան մը չես ըսելու նախամեծար կը տեսնես թողուլ որ բոլոր ընկերներդ պատժուին: քան թէ յրաժ յանցանքդ խոստովանել:

Ահաւասիկ տախտակ շատ գէշ բան է: Քու խիղճքդ քեզ հանգիստ պիտի չթողու, փոքրիկ աղջիկ Այնուհետեւ ամբողջ օրը տըրտում արտէր եւ ամօթահար պիտի լինիս: Դու պիտի զգաս թէ ընկերներուդ համա-  
րանքը կորսնցուցիր, մահաւանդ պիտի ըզ-  
գաս թէ այլ եւս բարի փոքրիկ աղջիկ մը չես, եւ ուրիշներուն կրել տուիր այն պա-  
տիժն, որուն միայն դու արժանի էիր: Երբ յանցանքդ խոստովանիս՝ այն ժամանակ միայն հանգիստ կը լինիս:

### 37. Վայելուչ կեցուածք

Աշակերտուհիներ, դասարանի մէջ կա-  
նոնաւոր կեցէք: Անփութութեամբ թոյլ  
կերպով մի՛ մօտենաք գրասեղանին վրայ  
գրելու: Մարմինիդ, գլուխիդ ու թևեր-  
նիդ ուղիղ պահեցէք, ստեղծելով կանոնա-  
ւոր կերպով զրէք:

Ուղիղ կանգնել կը տեսնէք, ոչ մի բան ուն-  
նախաձեռնել կը մնայ, երբ հարկ լինի մեր նը-  
կատմամբ լաւ կարծիք մը ուրիշին կազմել  
թաւ եւ երբ կը փափաքենք մեր մարմնոյն,  
մեր կերպարանքին արժանաւորութիւնը  
պահել, որ լաւ դաստիարակութեան նշան է:

Շատ անգամ ձեզ կը դասեն ձեր կերպա-  
նաչափին, կեցուածքին ձեւերին: Եթէ մէկը կը  
նեղակայանայ խառնուած մազերով, ազատ  
քէնքերով, անհոգ կերպով հագուած, վը-  
նասեղանին շնորհիւ: Նոյնպէս եթէ մեկ  
թոյլ տանք անհոգ լինել եւ ծայր կերպա-  
րանք ու ձեւեր ունենալ, որ մեզի սովորա-  
կան է, մենք զմեզ չենք յարգեր եւ յետոյ  
այս կերպարանքներն ու ձեւերը պահելով  
շատ դժուարութիւն պիտի կրենք զմեզ ուրիշ-  
ներուն յարգել տալու:

### 38. Տեսիլներու եւ գրքերու խնամք

Հինգ փայլաւ, տաւր փարա, քան փա-  
րա, տետրակի մը կամ փոքր գրքի մը  
գինն այս է. մեծ ստակ մը չէ, բայց յա-  
ճախ պէտք է գնել գրքեր, տետրակներ,  
այսպէսով կը տեսնես որ մեծ գումար մը կը  
կազմէ: Ձեր ծնողքները կ'աշխատին որ ձեր  
կրթութեան համար պէտք եղածը գնեն, եւ  
կամ հասարակութիւնն է որ կը վճարէ այս  
առարկաներուն համար հաւաքուած տուր-  
քերու ստակէն: Միեւնոյն բանն է, որով-  
հետեւ երկու պարագային մէջ ալ ուրիշնե-  
րու ստակով ձեր դպրոցական պրոպագանդա  
կը հողաք:

Ահա ասոր համար պէտք է խնամէք ձեր  
գրքերը: Թերթերու վրայ բիծ մի՛ ընէք  
ուր այնչափ գեղեցիկ բաներ տպուած են.  
ձեր տետրակները մի՛ պատռէք, որ հարկ  
լինի յաճախ նորոգել: Խորհեցէք որ այս  
ամէնը շատերու աշխատութեան եւ գիտու-  
թեան արդիւնք են: Խորհեցէք նաեւ որ այս  
բոլոր առարկաներն արժէք մ'ունին եւ կը  
կորսնցնեն, երբ մաքուր ու անեղծ չեն:  
Պէտք չէ որ եւ ե բան զուր տեղը ոչնչացնել,  
բանի որ անկարող ենք վերաբերել ինչ ու կը  
վնասենք:

### 39. Գնում քանութիւն չիւրացնել

Դասարանի մէջ աշակերտները չարուհակ  
բան մը կը կորսնցնեն: Գրիչ մը գետինը  
կ'իյնայ, մատիտ մը սեղանին վրայ կը մնա  
յուր, փոքրիկ պատիկեր մը գրքի մը մէջն  
կը սահի կ'իյնայ: Սակայն այս առարկաները  
բոլորովին կ'ստուած չեն. ուշ կամ կանգնել  
մէկը պիտի գտնէ:

Այն աշակերտուհի, որ այս տողերը կը  
կարդայ, թերեւս գտն լինի, որ գտած էր  
կորսուած գրիչը, մոռցուած մատիտը, վուր  
տաճած պատիկեր: Ուստի յիշե՛ք որ այս առար-  
կաները են չեն պահպանել եւ դու չես կը-  
նար ֆլէկի պահել: Եթէ տեսնես ու պահես գո-  
ղութիւն բոլոր կը լինի: Թէեւ կարեւոր գո-  
ղութիւն մը չէ, բայց թերեւս որիչ կարե-  
ւորներ ընկու սովորութիւն տայ: Եթէ պո-  
հես այս առարկաները, քաւ խիղճդ ան-  
հանգիստ պիտի լինի. անկիւն քեզ պիտի ը-  
սէ « գո՛ղ, գո՛ղ » եւ դու պիտի ամաչես:

զայս լուելով: Խորհէ նաև որ այդ բաները կորսնցնող ընկերիդ անիրաւութիւն ըրած կը լինիս, կը փնտռեն եւ երբ չգտնեն՝ կը ցաւին: Յիշեցե՛ք վերջապէս թէ անիրաւ կերպով ձեռք բերուած բաները, հեմարիս գոհունակութիւն չեն պատճառեր:


#### 40. Փոքրիկ շուտախօսութիւններ

— Օրիորդ, չե՞ս գիտեր, բաւ Աննիկ իր վարժուհիին, եղբայրս վաղը կուգայ, հայրս չէր ուզեր որ արձակուրդ առնէ, մայրիկս կ'ուզէր: Մինչեւ անգամ ասոր վերայ օր մը վիճաբանեցին եւ մայրս ամբողջ օրը լացաւ: Այն ատեն հայրս «այո» րսաւ: Բայց գիտե՞ս, ճամբորդութիւնը սուղի կը նստի եւ հայրիկս մայրիկէս աւելի տընտեսագէտ է. ուստի...»

Վարժուհին, որուն Աննիկը կը պատմէր այս պատմութիւնը, ընդհատեց «Լա՛ւ, լա՛ւ, Աննիկ, բնաւ պէտք չունի՞մ այդ ամէն բաները գիտնալու եւ դուն ալ բնաւ պէտք չունիս զայն պատմելու: Սովորե՛ք ուրեմն ձեռք քանակ մեջ անցածն ուրիշին չպատմելու: Ծնողքնիդ հաւանականաբար շատ պիտի ցաւէին, եթէ կասկածէին որ ձեր ընտանեկան գործերու մանրամասնութիւնները ուրիշներուն կը յայտնէք: Բարեբախտաբար բան մը պիտի չըսեմ անոնց, բայց եթէ ես ալ ձեզի պէս լինէի, շուտով ամէն մարդ պիտի իմանար որ հայրդ մայրդ երբեմն իրարու հետ կը վիճին եւ մայրդ բաւական սնտեսագէտ չէ: Ասոնք այնպիսի բաներ են որ ուրիշին չեն վերաբերիր, լաւ է որ օտարները չը գիտնան:

Շատ փոքրիկ աղջիկներ Աննիկին պէս կ'ընեն, եւ քիչերը գիտեն իրենց լեզուները կառավարել ու պէտք եղածին պէս խօսիլ: — Կ'ուզէ՞ք միշտ լաւ խօսիլ, քիչ խօսեցէք:

Տիպիւ փ. ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆ



#### ՌՕՊԷՆԻ ԱՌԱՋԻՆ ՄՕՐՈՒՐԸ

Պարոն Ժիւպիլան քաղաքապետը մէկհատիկ ազայ մը ունէր, որու համար՝ կնուսքի օրէն իսկ ծնողքը մեծ ասպարէզներ կ'երա-

զէին: Ապագային գրածելիք բարձր դիրքին վայելուչ յորշորչում մը ունենալու համար Ռօպէն անունով մկրտեցին զայն:

Հօրաքոյր, մօրեղբայր, ազգական ու բարեկամ չէին գիտեր ի՛նչպէս երես տան Ռօպէնի, ամէն մէկ քմահաճոյքը վայրկենապէս կը կատարուէր, տունին բոլոր ծառաները մինակ իրեն հրամանին տակ կեցած էին, անանկ որ երբ ութը տարու եղաւ, չփացած, անքաղաքափար, անընտել տղայ մը դարձած էր: Սափիւիջ Մարթէն ինչէ՛ր չէր քաջած անոյ՝ ձեռքէն, մանաւանդ իր թոռը Մատըլէն, զոր չարջըրկելու համար Ռօպէն միջոց չէր մնացեր որ ի դորձ չդնէր: Երբ քաղաքապետին պարոն որդին խնդալ կ'ուզէր՝ Մատըլէն էր որ ծաղու առարկայ կ'ըլլար: Խեղճ աղջիկը վրէժ առնելու համար, քանի Ռօպէնը տեսնէր «Պէպէք» կը կանչէր, եւ իրաւ ալ պզտիկ պարծենկոտը՝ որ ինքզինքը մեծ մարդ մը կը կարծէր, սոսկալի կերպով կը բարկանար այս անունին:

Ռօպէնի վրայ զաղափար մը ունենալու համար տեսնելու էր թէ ի՛նչպէս թիկնաթուռի մը վրայ ոտքը ոտքին բազմած լրագիր կը կարդայ, բերանը չօքոլայէ սիկաւ մը դրած: Եւ ելլել ասանկ մեծ պարոնի մը «պէպէք» բռնէ. ինչ ամօթ բան. միթէ մէկը որ իրեն յատուկ թիկնաթուռ, լրագիրը ունի, սիկաւը կը ծխէ եւ ծառաներուն կը հրամայէ, կրնա՞յ պէպէք մը ըլլալ: Ըստ՞ղն ալ ով է. ինքզնուկ աղջիկ մը, պատուաւ հագուստներով ու բոպիկ ոտքով: Ահա՛ ասոր համար է որ Ռօպէն կ'ատէր Մատըլէնը:

Օր մը Մատըլէն հօրը խանութին դրանը առջեւ նստած կը մտածէր. աչքերը Ժիւպիլանի տան դրան վրայ սեւեռած. յայտնի էր որ չարաճճին բան մը կը նիւթ էր:

Վերջապէս դուռը բացուեցաւ եւ Ռօպէն նոր նոր հագուստներ հագած, ձեռքը գաւաղան մը, չօքոլայէ սիկաւը բերանը, սէգ կերպարանքով մը դուրս ելաւ: Մատըլէն արդէն իմացած էր տան մէկ սպասաւորէն թէ Ռօպէն այդ օրը նոր հագուստներ պիհագնի: Երբ պզտիկ Ժիւպիլանը խանութին առջեւ հասաւ չարաճճի աղջիկը տեղէն ցատկեց եւ դիմացը վազելով յարգալիք բարեւեց:

— Բարի լոյս, պարոն Ռօպէն:  
 — Հա՛, դուն ես, պզտիկ, պատասխա-  
 նեց Ռօպէն խաչնուպանի՝ ձայնով մըն շատ  
 աղէկ. կամաց կամաց կը կրթուիս կոր:  
 — Երբ մէկը ձեզի պէս մեծ պարոնի մը

լով, ինչպէս կ'ընէր իր հայրը. ըսել է պէ-  
 տէք չեմ տյլ եւս:

— Օ՛հ, պարոն Ռօպէն, երբ ատանկ  
 աղուոր կը հագուիք, ի՛նչպէս պէպէքըսեմ:

— Աղէ՛կ, պզտիկս, աղէ՛կ. կը նայիմ



հետ խօսի, ի հարկէ կրցածին չափ քաղա-  
 քավարութիւն կը ցուցնէ:

— Անանկ է, ըսաւ Ռօպէն մատին ծայ-  
 րովը սիկառին փոշին թոթուելու պէս ընե-

որ խելքդ գլուխդ կուգայ կամաց կամաց:

Պրն. քաղաքապետը այս շեշտով կը խօ-  
 սէր իր պաշտօնեաներուն հետ. Ռօպէն ալ՝  
 հօրը նմանելու տենջով անոր ըսած խօս-

քերը միտքը կը պահէր ու կը գործածէր :

— Ես ալ կը տեսնեմ որ, ըսաւ չարա-  
ձճի Մատըլէն, բոլորովին պարոն ժիւպի-  
լանի կը նմանիք. առաջ կարծես թէ եկողը  
Պն, քաղաքապետն է, եթէ... :

— Բայց... ի՞նչ, ըսաւ Ռօպէն սրտնե-  
ղած :

— Երկար մազերնիդ ու ծնօտնուտ վրայ  
բուսած քանի մը թերեւրդ գէմքերնիդ աւ-  
րեր են :

— Աղջիկ, իրաւ կ'ըսես, գոչեց միամիտ  
պարոնը, ուրախութենէն խենդենալով որ  
մօրուքը բուսեր է : Հայրիկդ խանութն է :

— Այո՛, պարոն ժիւպիլան, ձեր հրա-  
մանին պատրաստ է :

— Շո՛ւտ, կանչէ որ մազերու կտրէ ու  
մօրուքս ածիլէ :

Մարթէն ներսէն իմացեր էր աղջկանը  
ու տղուն խօսակցութիւնը. հասկցաւ Մատը-  
լէնի միտքը եւ ուղեց որ ինք ալ մօտ ու-  
նենայ տրուելիք պատիժին մէջ :

Մեծ յարգանքով ընդունեց Ռօպէնը.  
լուրջ յաճախորդի մը պէս է՛ն ազուր որ  
թողին վրայ նստեցուց :

— Ի՞նչ ձեւ կ'ուզէք որ մազերնիդ կտա-  
րեմ, պարոն, հարցուց խոնարհութիւն մը  
ընելով :

Ռօպէն շուարած մնացեր էր :

— Ալա պո՞ս, լա քիւքիւս, ըսաւ սափ-  
րիչը :

— Լա քիւքիւս, լա քիւքիւս, գոչեց Ռօ-  
պէն :

Մարթէն շուտ մը խաշոր թաս մը ան-  
ցուց տղուն գլուխը, յետոյ սկսաւ դուրս ին-  
կած մազերը կտրել մկրատով, թխորակ սի-  
րուն գանգուրները վար կը թափէին իրա-  
ւու վրայ : Ամբողջ ժամ մը Ռօպէն անշարժ  
կեցաւ աթոռին վրայ, առանց փոքրիկ շար-  
ժում մը ընելու, վախնալով որ ականջը կը  
կտրի : Մատըլէն՝ դիմացը անցած գոհ սրը-  
տով կը դիտէր իր թշնամիին քաշած նե-  
ղութիւնը : Երբ մազերը կտրուեցաւ, սափ-  
րիչը օճառաջուր բերաւ եւ սկսաւ տղուն  
ծնօտը աճառել. Ռօպէնի ուրախութենէն  
խենթենալը կուգար. իսկ չար աղջիկը կը  
զուարճանար անոր խաբուիլը տեսնելով :  
Ծնօտը, երեսը, այտերը աղէկ մը փրփու-  
րով ծածկելէ ետքը Մարթէն գնաց դուռը  
կեցաւ : Անցնող զարձողին հետ խօսելով :

Ժամանակը կ'անցնէր որանհոգութեամբ բնաւ  
ուշադրութիւն չէր. բնէր ներքը : Վերջապէս  
Պալտն քաղաքապետին տղուն համբերու-  
թիւնը հատուկ :

— Տխմար, ի՞նչ կ'սպասես, ինչո՞ւ չես  
ածիլեր ինծի :

— Յարգելի պարոն, կ'սպասեմ որ մօ-  
րուքդ փուսնի, պատասխանեց Մարթէն  
լուրջ դէմքով մը :

Մատըլէն քահ քահ մըն է փրցուց,  
Դուռը կեցող քանի մը տղաքներ ալ լսել  
էին, անոնք ալ սկսան իրեն հետ խնդալ :  
Ռօպէն՝ երեսը չսրբած տուն գնաց : Ա՛լ  
գիւղին մէջ ամէնուն բերանն էր ինկեր Ռօ-  
պէնի մօրուքը, անանկ որ խեղճ տղան շա-  
բաթի մը շափ չհամարձակեցաւ տունէն  
դուրս ելլել :

Թարգմ. ԶԱՐԵԶ Ն. ՊԵՏԻՊԵՆՆԻ



## ԱՆՄԱՅՐ ՄԱՆՎԱՆ ԵՐԱՋԸ

Թեւեռուն մեջ գիշերուան՝  
Երբ ես հանգիստ քնեի,  
Ու պալլուն լուսնկան  
Երագիս մեջ տեսնեի :

Ես կ'ուզեի երկնից մեջ,  
Բնակարան մ'ունենալ,  
Ուր վառեին լոյս անեւջ,  
Վա՛րդ, գոյնգոյն՝ ամենքն ալ :

Ուր ծաղիկներ ծիւրն,  
Սփռելով միտս անուտ հոտ,  
Ու քոչնիկներ երգեին՝  
Խու՛մբ խու՛մբ քառած մեզի մօտ :

Մայրս հո՛ն գացած է, վաղուց,  
Այսպէս քսին ինձ այն օր,  
Բայց, ա՛խ, է՞ր գիս հոս քողուց,  
Ցաւցուցե՞ր եմ սիրեն անոր :

Ո՛հ, ես ալ՝ հոն՝ կ'ուզեի  
Ու քնալի մ'ալ ինձ տան,  
Եւ ամեն օր երգեի,  
Մայրիկիս հետ քաղցրաճայն՝  
Ինձին՝ ՍՐԱՊԵՆՆԻ

ԲԱՐԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԱԳԵՐԸ

Հարուստ գինեգացի մը զաւակ մը ունէր։ Տղան աշխարհի չար, աշխարհի ծոյլ, աշխարհի ինքնակամ էր որքան չէր ուզէր աշխատել։ Ուստի զանի գիւղին երէցին յանձնած էին՝ հեղահատիոյը ընկուեւ վարքն ուղղել փորձելով համարք։

« Բան մըն ալ չեմ գիտեր, — կ'ըսէր աբա զան, — ես ազնոջական չեմ եմ, ազնոջական մը բան մըն ալ չեմ տես։ Տէտէք հայրս »։

Ու երէցը ահոր կը բացատրէր թէ իր հայրը բաւական չէր ունէր մէկն էր, թէ իր հարստութիւնը դիւրեւէն առաջ, որքան քրտինք թափած էր, ազատութեանը դուրսը գնացեր էր ու ծառանայր յաւարագ չէր վստահէր փութաշանութեանը եւ ունէր գիրք մը գտնուեալ հեպեւած, վերջնապէս օգտակար ունեցանք սորված հոն յետոյ դործնական կեանքին մէջ նետուած, տատաճ տընած, ու իրեն դիւր մը չիներու համար աշխատած աշխարհի եւ հիմա իր աշխատութեանց պտուղը վայելած։

« Աղէյր ուրեմն, — ըսաւ տղան, — ես Եպիսկոպոս ըլլալ կուզեմ, — ան Դան մըն ալ չեմ տես, ուրիշ զուարթ չեմ, — կեանք իմ ազնոջոր աղա, աղիւտիկ մը կ'ապրիմ »։

Ու երէցը անոր ըսած, որ Եպիսկոպոսը գեղացիէն աւելի զբաղումներ ունի, Եպիսկոպոս ըլլալ առաջ պէտք է սարկաւագ վարդապետ ըլլալ, — էտքը Եպիսկոպոս Պատրիարքի ըստ իր ասանց կարգաւ թափանալու չէր խեղդ ունենալու, — չէր կրնար Եպիսկոպոս ըլլալ։

« Անպիտակ է նա, — ես բարի Աստուած ըլլալ կ'ուզեմ, — բարին Աստուած ոչինչ կ'ընէ »։

Երէցը գնուողները երկինք բարձրացուց։

« Մտածէ՛ անգամ մը, զաւակս, — կ'ըսէր աբա, — թէ Աստուած բովանդակ տիեզերքը կը կառավարէ։ Իր տեսքը ամբողջ տիեզերքն ու մարդուն սիրտէն ծնած գաղափարը կը պատէ։ Երկինքին ու բոսնոյ խոտին ներդաշնակութիւնը կը լսէ Ան։ Ապա ուսած քննաչի հանգ չիր, որովհետեւ միշտ կը սիրէ »։

Բայց տղան միաքը դրած էր եւ ապահովապէս կ'ուզէր բարի Աստուած ըլլալ, անանկ որ իրիկուան մերժեց պառկելը եթէ

ալ չէր կրնար իր բաղձանքին հասնիլ։ Ըստառնալիքներ ու աղաչանքներ, ամէնքն ալ անօգուտ եղան, մինչեւ որ կուէն տաղաւացած, երէցին քով ծառայող կինը, անկին մը տանելով չարածձի մանչը, անոր խոստացաւ որ հետեւեալ առտու բարի Աստուած պիտի ըլլար։ Այս ապահովութեան վրայ, անկողին մտաւ։

Գիշերը, փոքրիկ ազնոջականը խորհեցաւ ու որոշեց չփոխել իր գաղափարները։ Իր առաջին հարցումը ելած ատեն, եղաւ հարցնելը թէ՛ բարի Աստուած եղած էր։

« Այոք, — ըսաւ ծառայող կինը, — բայց այսօր կիրակի է, ահա՛ ծամերգութեան ատենը, բարի Աստուածը պէտք չէ՛ որ պակսի անկէ »։

Ու անկիւս եկեղեցի խորհեցին ծամբան մարգարետինէ մը անցաւ որ իշխանին սեպհականութիւնն էր հոն, հաւաքական ժողովը տեսաւ որ գիւղացիները ծամ կ'ուղղուէին, ինք ալ վաղեց անոնց հետ գնաց։

« Պառպառա՛, — պոռաց մեր ազնոջական աղան, — միթէ միս-մինա՞կ պիտի թողուս առ սագերը »։

— Միթէ կիրակի օրէ՞րն ալ կը նային սագերը, պատասխանեց Պառպառա, — այնքան տօն է։

— Ո՞վ ուրեմն անոնց խնամք պիտի տանի, հարցուց մանուկը։

— Կիրակի օրը բարի Աստուածն է որ զանոնք կը նայի, անոնք ինչ, անոնք բարի Աստուածոյ սագերն են։

Ու ինչ մեկնեցաւ։

« Տղա՛ս, — ըսաւ աղախինը, — ի՞նչացալ Պառպառայի խօսքերը։ Քեզ քու կամքովդ եկեղեցի առաջնորդել կ'ուզէի՝ հոն երգեհոնին երգերը լսելու համար, բայց կրնայ ըլլալ որ դժբաղդութիւն մը պատահի՝ ապա գեղուն, ու ձրովհետեւ դո՛ւն ես բարի Աստուածը, հետեւաբար քեզի կ'իշխայ զանոնք նայիլը »։

Ի՞նչ կրնար պատասխանել մեր աղախի մեծ աղան։ Բիթը բերանը ծամածոնց ու ամբողջ օրը վաղեց սագերուն ետեւէն, բայց իրիկունը երդունցաւ, որ այլ եւս բարի Աստուածոյ անունը պիտի չստանձնէ։

ԵՏՈՒՄՏ ԼԱՊՈՒԼԵՅ

Թարգմ. ՎԱՀՐԱՄ Յ. ԴԱՐԱՅԱՇԵԱՆ

ՆՇԱՆԱԽՈՐ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆՔ

## Փ Ի Ղ Ը

Շատ հնդիկներ այնպէս կը կարծեն թէ՝ մարդկային հոգի կը բնակի փիղին մարմինին մէջ։ Սիամի մէջ մանաւա՛ր սպիտակ փիղերն հնդիկ կայսրերուն հոգիներուն բռնակարաններն են. ամէն տեսակ ծառայութենէ հրաժարած են, պալատներու մէջ կը բնակին. իրենց հանգերձները ոսկեզօծ են և իրենց համար կերակուրներ կը պատրաստուին ոսկիէ ամաններու մէջ։ Ծունգերին կայսրերուն առջեւ միայն կը խոնարհեցնեն և հնազանդ կը գտնուին։ Թէպէտ անասուններ են, բայց ամէնէն իմաստուններն են։ Կենդանիներէն և ոչ մէկը կը հաւատարի իր իմացականութեան, ճարպիկութեան, զօրութեան և հնազանդութեան կողմանէ։

Հնդկաստանի մէջ փիղը կ'որսան և զայն օգտակարապէս կը գործածեն պատերազմի, որոտրութեան և խել մը աշխատութեանց մէջ։ Գլխաւորաբար երկու տեսակ փիղ կայ, Հնդկաստանի փիղը, ուռուցիկ ճակատով, պզտիկ ականջներով, սեղմուած ականջներով՝ որոնց թիւը կը հասնի քսան և վեցի, հինգ մէթր հասակաւ։

Ափրիկեան փիղը, տափակ ճակատով, խոշոր պաշտպանողական ականներով մինչև 8 մէթր երկայնութեամբ, այնքան լայն ականջներով, որոնք ուսերուն մէկ որոշ մասը կը գոցեն, երկու տեսակներն ալ մեծ բազմութեամբ կ'ապրին լռակեաց ու մենաւոր անտառներու խորն։ Արուն միշտ խուճին կ'առաջնորդէ։ Երբ վտանգ մը սպառնայ, գլուխը վեր կը բարձրացնէ, որուն կը հնազանդին էգերն ու ձագերն։ Մարդիկներու և կենդանիներու վնաս չեն պատճառեր, բայց վտանգալի պարագայի մէջ, ինքզինքնին ամենամեծ յանդգնութեամբ կը պաշտպանեն։

Հնդկաստանի մէջ զանազան եղանակներ կը գործածուին փիղեր որսալու և բռնելու համար։ Սէյլանի մէջ, փիղի որսորդութիւնը ամէնէն կարեւոր բանն է։ Կառավարութիւնը կը ժողովէ մեծ թուով եւրոպացիներ, որոնք կը հաւաքուին ընդհանրապէս փիղե-

րու բնակավայր եղող անտառներուն մէջ։ Ահագին շրջանակ մը կազմեն և իրենց բոլոր զօրութեամբ կ'աղաղակեն։ Փիղերն ահարեկելով այդ ճիշերէն, մէկ կողմ միայն կը փախչին և դժբաղդաբար այդ կողմը գտնուի Ռեսսանց որ ուրիշ բան չէ բայց էթէ ցիցերով շրջապատուած վայր մը, ուր անգամ մը եթէ անասունը մոտէ՝ կարող չէ այլ եւս անկէ դուրս ելլել։ Զանոնք ներս մտցնելու համար կը կրկնապատեն իրենց աղաղակներն և անոնց աչքերուն կը բռնեն վառ ջահեր։ Այն ատեն ամէնքն ի միասին կը սարսափին և թակարդին մէջ կը վազեն։ Զանոնք բռնելէն յետոյ, առաջին խնամքն է ընտանեցնել, Թակարդին դրան առջեւ կը կեցնեն մէկ կամ երկու ընտանեցած փիղեր, որոնց պաշտօնն է հնազանդութեան շաւղին մէջ դնել իրենց վայրենի ընկերները պատիճներու հաքուածներով, եթէ վերջիններն արտաքոյ կարգի ընթացքի մէջ գտնուին։ Երբեմն իսկ վայրենի փիղը հասա պարաններու միջոցաւ կը կապեն մօտակայ ցիցերուն և այսպէս խեղճ անասունը չուանէ ցանցի մը մէջ գտնուելով՝ կարող չէ ազատաբար շարժիլ։ Այս բանտարկութիւնը միակ միջոցն է զգին ընտանեցնելու և հանտարտեցնելու անոր վայրագ բնութիւններն։

Ըսինք թէ Հնդկաստանի մէջ ինչպէս կ'որսան փիղերը, կը մնայ այժմ՝ օրինակով մը ցուցնել թէ ի՞նչպէս կ'սպաննուին այդ յաղթամարմին անասունները։

«Սէվալիքի վայրի կիրճերուն մէջ ենք, երկու բնիկներ կ'ընկերանային որսորդի մը այդ վտանգալի անցքերուն մէջ։ Գետնին վրայ տարածուած կը մնայինք, խոնջած և վառտակարեկ եղած սասմիկ ջրմուկներէն և ջուրի նուագութենէն որ սովորական իրողութիւն մըն է Սէվալիքի լեւնաշղթային մասերուն մէջ։ Յանկարծ ծառի մը ճիւղին կոտրուելու ձայնը լսեցինք այդ խորին լռութեան մէջէն. անշուշտ և առանց աղմուկ մը յարուցանելու յառաջացանք ձայնին ելած կողմը և տեսանք խուճ մը փիղեր՝ որոնք կը բազկանային եօթը խոշոր փիղերէ և իրենց բազմաթիւ ձագերէն։ Մեզ վնաս չէին հասցներ, պաւսպուր մացառներուն մէջ կը ճարակէին։ Հրամայեցի երկու ընկերներուս որ ինձմէ 20 կամ 30 մէթր հե-

ուի կենան հրացաններն պատրաստած : Իսկ ես ատրճառակը ձեռքս բռնած , սկսայ խուժ-բին կողմը յառաջանալ , մացառներուն մէջ գրազած էին թումբեր քաղելու : Հովին ազդեցութեամբը ամէնուն պատիճը իմ կողմն դարձաւ : Ուշադրութիւն չըրի : ահագին էգ մը իմ առջեւ է , պամպուի ճիւղերը կը քաղէր . գաղաազողի խոտերուն մէջէն ստահեցայ , անկէց չորս քայլ հեռաւորութիւն կար , ճակատին նշան առիւ և կրակ ըրի : Անմիջապէս սկսայ խոյս տալ , եթէ հարուածս մահացու չըլլար , կրնար վրաս յարձակիլ և այն ատեն վիճակս վտանգաւոր էր : Ծառերուն մէջ ահաւոր շառաչիւն մը լսուեցաւ . ընկերոջս քով վազեցի , տեսայ փիղը անկենդան տարածուած պամպուկներուն մէջ : Գնտակը դանկը ծակած էր և ուղեղէն անցած էր » :

Ափրիկէի մէջ , փիղը կ'որսան ոչ միայն վանի իրենց ծառայութեան մէջ աշխատցնելու համար , այլ և պաշտպանողական երկու կողմէն դուրս ցցուած ակաւներն առնելու : Նուպիոյ մէջ հետեւեալ կերպով՝ այս վտանգաւոր որսորդութիւնը կը կատարուի : Ամէն բանէ առաջ , որսորդները պէտք է զիտնան կատարելապէս փիղերու ամենօրեայ սովորութիւններն և քաջ ծանօթ ըլլան այն վայրերուն ուր կը գտնուին այդ անասունները : Մեծամեծ ծառերու տերեւներու և ճիւղերու ներքեւ պահուըտած երկար ժամեր անշարժ կը մնան , կ'սպասեն փիղին մօտիկնալուն ու երբ փիղը աներկիւղ կը շրջի իրենց վրայ եղող երկայն և բարձր խոտերուն մէջ , և ահա քաջ որսորդներն անոնց աչքերուն ու բերին մէջ կը մխեն իրենց սրածայր նիզակները : Այս եղանակը նախնական և պարզ կ'երեւի՝ բայց շատ վտանգաւոր է : Անհրաժեշտ պայմաններ կարեւոր են , մերձակայ վայրերու ծառերն որոնց վրայ պիտի ելլէ որսորդը , պէտք է որ ըլլան հսկայական և բաւական անմատչելի . տարակոյս չի կայ որ փիղը եթէ չսպաննուի ու միայն վիրաւորուած մնայ , կրնայ զօրուոր հարուածով մը հիմալայանակ բնել մօտակայ ծառատունկերն և արմատախիլ ընել ծառը :

Հրացանով որսորդութիւնը ամէնէն աւելի վտանգաւոր է : Թէպէտ հրացանը վիճակ մէջ օգտակարագոյնն է , Քասսօլ Քրէյկըր անխոնջ և յանդուգն որսորդ մ'էր :

մեծ ճարտարութեամբ հրացան կը պարպէր և շատ անգամներ վտանգալի կացութեանց մէջ գտնուելով ինքզինքն ազատեց : Անգամ մը իր ընկերաց հետ վիրաւորեալ փիղ մը կը հալածէր . Յանկարծ անասունը ետին դարձաւ , պատիճովը զինքը բռնեց , օդին մէջ նետեց և ապա ոտքերուն տակ կոխտեց : Ընկերներն ահաբեկ և սարսափահար խոյս տուած էին այդ սրտամորմոք վայրէն և չէին համարձակած ակնարկ մը նետել այդ տխուր ողբերգութեան թատեր վրայ : Յաջորդ օրը ամէնքը խմբովին արկածավայրը եկան վերջին յարգանքնին մատուցանելու : Փիղը պատառած էր անգթաբար մարմինը և մնի կտորները փոշիի մէջ թաղած էր : Հագիւ կարողացան քանի մը կտորները գտնել եւ թաղել : Եւ դեռ ի՞նչ զոհեր կը լինին որսորդութեան մէջ , որ պարուս ամէնէն վրտանգաւոր ու յանդուգն ձեռնարկութիւններէն մին նկատուած է . այնքան արկածալի պատմութիւններ ունի , որուն վրայ ի օսելու համար հատորներու կարօտ ենք իշտ :



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Դ

Ժ Ի Ի Լ Վ Է Դ Ն

## ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 28րդ թիւէն)

ԽԳ .

Գիտէի որ , ամէնէն ընդունուած տեսութիւններու համաձայն , երկրիս հանքային կեղեւը բնաւ հանդարտ վիճակի մը մէջ չի մնար : Ներքին նիւթերու տարրազաղու-թեանէն յառաջ եկած փոփոխութիւնները , ահագին հեղուկ հոսանքներու արտադրած շարժումները , մաշխոսական ներգործութիւնը միշտ կը դզրդեն այդ կեղեւը : Անշուշտ այս տեսութիւնները միտք բերելով

վարդուհի վախճալը չի գար. բայց այս քա-  
նկերուն վրայ մտածելով հանդերձ երբ ուրիշ  
քանի չը կրեալ թներ ալ գիտեցի. ո նե-  
ցած սոթկութիւն չափազանցութեան աստիճա-  
նին հաճաւ: Լուսած խղճողները իրարու կը  
յաջորդէին միշտ եւ չարունակական որոտումի  
մը գաղափարը կուտային: Յետոյ սպրուած  
կղզմացոյցը, որ ելեքտրական երեւոյթի մը  
արդարեւն էր՝ աւելի եւս ամրացուց զիս իմ

իշխման հանդարտ ձայնով. ի՞նչ վայր  
— Տեսէ՛ք, պատասխանեցի. սա դըրը-  
գող պատերը, տիրած սոսկախի վերմութիւնը,  
եռացմը ջուրը, հայտ շողիները, անբուած  
կողմնացոյցը՝ ամէն բան՝ երկրաշարժի մը  
նշաններն են:

Հօրեղբայրս կամաց մը գլուխը շարժեց  
— Զուտա՛կս, կարծեմ՝ կը սխալիս. ասիւ-  
կա երկրաշարժ մը չէ: ասոյ ընթացքով, լայն



գաղափարիս մէջ: Հանքային կեղեւը խոր-  
տակուի կ'սպիրտնար, կրանիթէ գանգուածը՝  
քակուելու երեւոյթ ունէր. ճեղքը՝ պիտի  
գոցուէր, պարսպութիւնը՝ լեցուէր եւ մենք,  
խեղճ հիւլէներս, այս ճիւղալային իրարուն-  
ցումին մէջ պիտի փչրուէինք:

— Հօրեղբայր, գոչեցի սարսափահար,  
հօրեղբայր, կորսուեցանք:

— Նորէն ի՞նչ կը վախճալս կոր, ըսաւ

— Հապա ի՞նչ է՞:

— Ես ատկէց աւելին գուշակեցի, հրաջ  
բըլխի ժայթքում մըն է:

— Հրաբու՛խ մը, ըսել է հրաբուխի մը  
խառնարանը տանող ճամբուն մէջ կը գըւ-  
նըւինք:

— Այո՛, ըսաւ հօրեղբայրս ժպտելով, և  
ասից աւելի յաջող բանի մը չէինք կրնալ  
սպասել: Այո՛, աւելցուց հանդարտ երեւոյ-

թովմը, երկրիս երեսը ելլելու միակ ճամբան այս մնաց մեզի:

Չպիտի խօսիմ հազարումէկ գաղափարներու վրայ որոնք մտքիս մէջ կը խժային, Այո՛, հօրեղբայրս իրաւունք ունէր. ուրիշ ազատումի հնարք չկար մեզի:

Ակններս էր թէ հրաբուխի մը ճամբուն մէջ էինք. եռացող ջուրին տաք կը նշմարէի լաւայի զանգուածը որ խառնարանէն դուրս ելած ժամանակ ամէն կողմ պիտի տարածուէր: Այսօտեմամբ՝ Մնէֆէլսի պէս մարած հրաբուխի մը հետ չէր գործերնիս. հապաւորողը գործունէութեան մէջ եղող լեռան մը հետ: Կը մտածէի թէ ո՞ր խառնարանէն դուրս պիտի նետուէինք:

Կողմնացոյցը աւրտելէ առաջ՝ Սաքնիւսէմի հրդեհանդանէն մեկնելունս ի վեր, հարիւրաւոր փարսախներ դէպի հիւսիս նետուեցանք: Արդեօք նորէն Իսլանտայի տաղը՝ վերագարծանք: Հեքլայի եւ կամ նոյն կղզիին ուրիշ եօթը հրաժայթք քերաններուն մէկէն դուրս պիտի ելլէինք:

Դէպի արեւմուտք, հինգ հարիւր մղոն հեռավորութեան մէջ, նոյն զուգահեռականին տակ, Ամերիկայի հիւս, արեւմտեան դեռ գրեթէ անծանօթ հրաբուխները կային: Արեւելեան կողմը՝ լայնութեան գլխունը՝ ընդ առօրեային տակ մէկ Փրաբուխ մը միայն գիտէի, այն է էսք, Արիցպէրիէ քիչ հեռու գտնուող կղզիի մը մէջ:

Լաստը քնող արագութիւնը երթալով կը շաղկապ, տաքութիւնը կը կրկնապատկուէր մեզի իբր. ճամբայ ծառայող ներքնուլիկ երթալով կը լայննար եւ քորս կողմէն ուրիշ անցքեր ալ կը բացուէին ուրիշ խոցեր դուրս ժայթքելով պատեճը կը լիզէին:

— Տեղէք, հօրեղբայր, տեսէ՛ք:

— Ի՞նչ կայ, ծածմային բոցեր են, հրաբուխներու մէջ բնակացն բան նման է:

— Հապա՛ եթէ քեզի չըջապատեն, շրնչահեղձ ընեն:

— Մի՛ վախնար, Աքսէլ, չե՞ս տեսներ, ճամբան միշտ կը լայննայ. եթէ հարկ ըլլայ, կրնանք լաստը թքողու եւ ճեղքի մը մէջ ապաստանիլ:

— Հապա ջուրը որ միշտ կը բարձրանայ:

— Ա՛լ ջուր չկայ, Աքսէլ, տես՛, ամբողջ լաւայի զանգուած մըն է որ մեզի կը կրէ եւ որ մինչեւ հրաբուխին բերանը պիտի տանի:

Իրաւ ալ ջուրի սիւնը բոլորովին աներեւութացեր էր եւ անոր տեղ բաւական թանձր նիւթ մը կ'եւար: Տաքութիւնը չափէն աւելի սաստկացեր էր. ջերմաչափ մը գրեթէ 70 աստիճանի պիտի հասնէր. եթէ վեր ելլելու արագութեան յառաջ բերած զովութիւնը չըլլար շատոնց շնչահեղձ կ'ըլլայինք: Առտուն ժամը ծին ատենները լոստը մէկէն ի մէկ կանգ առաւ:

— Ա՛ս ինչ է, գոչեցի յանկարծական տատանումէն ցնցուելով:

— Դադար մը:

— Հրաբուխը կը հանդարտի՞ կոր:

— Յուսամ թէ ոչ:

Ոտքի ելայ չորս կողմը նայելու համար թէ արդեօք լոստը տեղ մը կը կառչի: Բնաւ ննման չէր: Ամբողջ լավայի զանգ՝ առածը մեզի հետ կանգ առեր կեցեր էր:

— Արդեօք բոլորքումը կը դադրի՞:

— Հա՛, բնաւ հօրեղբայրս ակօսաները սեղմելով, կը վախնա՞ս կոր, սղատ. բայց հոգ մի՛ ըներ. ահա հինգ վայրկեան է որ կանգ առեր ենք. քիչէն կրկին ճամբայ պիտի ելլենք:

Սօսնլով հանդերձ, հօրեղբայրս ժամացոյցը աչքէն չէր հեռացներ: Քիչ մը ետքը լաստն արագ ու անկանոն շարժումէ մը բռնուելով սկսու յառաջանալ գրեթէ տասը վայրկեանի չափ ու նորէն կանգ առաւ:

— Աղէ՛կ, բնաւ հօրեղբայրս, տասը վայրկեանէն նորէն ճամբայ պիտի ելլենք. ընդհատ հրաբուխ մըն է այս:

Իրաւ ալ տասը վայրկեան ետքը նորէն սկսաւ եւ նոյնչափ ժամանակ տեւեց: Ուրչափ որ միտքս շարժրկեցի, չկրցայ խցատութիւն մը գտնել այս երեւոյ՛էն, մինակ ու չափին միտահ էի որ բուն իսկ հրաբուխին ճամբուն մէջ չէինք, հապա քովտի անցքի մը մէջ: Ուղեղս ալ յոգնած էր բոլոր այս հակահարուածներէն. դատողութիւնս գրեթէ կորսնցուցած էի. ի վերջոյ անդգայ վիճակի մը մէջ ինկայ. գրեթէ սարսամ գաղափար մը պահելով շուրջս անցած դարձածներէն: Վերջին անգամ Հանսի դէմքը տեսայ, տոնյն փոցերով շրջապատուած եւ ինքզինքս բոլորովին կորսնցուցի:

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐՆԱՆ

(Շահունակեթի)

## ԼԱԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Մարդ երբ իր կարգացածը լաւ կը հասկընայ, ընթերցումը այն ատեն ճշմարտապէս օգտակար կ'ըլլայ: Հասկնալու համար պէտք է կարդալ յամբօրէն և հետեւաբար քիչ կարդալ: Ի՞նչ բանի կը ծառայէ մէկ ժամուս մէջ ամբողջ հատոր մը լափել, եթէ լաւ ըմբռնած չենք կարդացածնիս, աւելի ազէկ պիտի ըլլար կարդալ երկու էջ և աւելի իմաստը լաւ հասկնալ, աչքերնիս նըշաններ տեսած պիտի ըլլան թուղթին վրայ, և չրթունքնիս քանի մը բաներ մըմնջած, և ահա այս պիտի ըլլայ ամէնը, որմէ ո՛չ միտքը, ո՛չ սիրտը կրնան օգտուիլ:

Արդ նմանօրինակ գործողութիւն մը ոչ միայն արհամարհելի ընթերցում մը յառաջ կը բերէ, այլ և ունի ուրիշ աւելի ցաւալի հետեւանքներ:

Առանց խորհրդածելու կարդալու վարժուող տղան կ'առաջնորդուի յիշողութիւնը զարգացնելու՝ առանց հասկնալու, մտիկ ընելու՝ առանց լսելու, դիտելու՝ առանց տեսնելու, և վերջապէս կը կորսնցնէ իր ըրածին, ըսածին և յաճին գիտակցութիւնը:

Պէտք չէ միայն ուշադրութեամբ կարդալ, գրքեր՝ որոնք կարող ըլլան զարգացընել ձեր իմացականութիւնը, անոր հայթայթելով նորանոր ծանօթութիւններ, և կրթել ձեր սիրտը անոր ներշնչելով բարութեան զգացումներ:

Դուք տակաւին շատ փոքր էք, այնպէս որ չէք կրնար տակաւին սրտել ինչ որ կրնայ ձեզի նպաստաւոր կամ վնասակար ըլլալ: Երբ դուք դաշտին մէջ հանդիպիք ձեզի անծանօթ պտուղներու, ձեր ծնողքներուն կը հարցնէք թէ կրնա՞ք ուտել զանոնք առանց թունաւորուելու վախին, նոյնը ըրէք նաև գրքերու նկատմամբ, երբէք գիրք մի՞ կարդաք առանց ձեր ծնողքներուն կամ ուսուցիչներուն խորհուրդ հարցնելու, զի մի՞ գուցէ թունաւոր ուտելիք մը դուրսի ձեր առջև: Գիտցէք որ յոռի ընթերցում մը այնքան աղետարեւ է ձեր մտքին որչափ են թունաւոր տունկերը մարմնին:

Կան գիրքեր որք առանց վնասակար ըլլալու, ձեր հասողութենէն վեր են, կամ կը խօսին այնպիսի իրերու վրայ որոնցմէ օգուտ չկրնալ քաղելէ վատ, զձեզ չպիտի

կրնան հետաքրքրել և հետեւաբար զանոնք կը գոցէք նոյնիսկ առաջին էջը կարդացած ատեննիդ: Արդ պէտք է սկսիլ միայն այն բանը զոր կրնանք լմնցնել:

Ուրեմն մի՛ կարդաք գիրք մը առանց խորհրդակցելու՝ անոնց հետ: որոնք կրնան ձեզ լուսարանել. ասիկա չիտարուելու ամէնապարզ միջոցն է:

Թարգմ.

Ա. ՏԻԻՑՄԷՃԵԱՆ

Աշ. Սաշկ. Վարժարանի

Աֆ. Դարաձիսար



## ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԸ

Աւխասուքիւն, Պարապուրդ, Հանգիստ

Եւ Քուց

ՔՈՒՆԸ. — Մարմինը սնունդէն զատ ուրիշ բանի մ'ալ պէտք ունի, այդ է հանգիստը եւ քուցը:

Քուցը մարմնոյն ամէն հոգնութիւնները փոխարինողն է, սա պէտք է ըլլայ հանգարտ, խորունկ եւ պէտք եղածին չափ երկարատեւ: Եօթը ժամ բաւական է, բայց կարելի է զայն ութը ժամու երկարեցնել, աւելի լաւ պէտք է վարժուիլ առտունները կանուխ ելլելու եւ իրիկունները կանուխ պառկելու: Աւելորդ չենք համարիր ֆուսքիսի այդ մասին ըսած մէկ առածը. « Ո՛վ որ ուշ կ'ելլէ, օրուան ամէն դործերուն մէջ ետ կը մնայ: »

Երկարատեւ քուց մը չենք յանձնարարեր ամէնուն համար. պէտք է կշտանալու չափ քնանալ. նիհարները լաւ կ'ընեն եթէ շատ ժամանակ սնկողին մնան՝ քիչ մը վրայ գալու համար իսկ պերքը՝ ընդհակառակն կարելի եղածին չափ քիչ ատեն անկողնին մէջ մնալու են: Մէնակ գիշեր ատեն քնանալը աւելի լաւ է, իսկ ցերեկները ոչ ինչ կերական կիներ եւ այրեր՝ որոնք գիշերը երկար ատեն անքուն կ'անցնեն եւ առտուն արեւը ելլելէն շատ ետքը դեռ կը քնանան, կամաց կամաց կը տփգունին և թարմութիւննին կը կորսնցնեն, մտային եւ մարմնային գործութիւննին կը նուազի:

Հանգիստը. — Բաց օդին, արեւին տակ հրահանգը եւ մարմնամարզը առողջապահիկ

պէտք մըն է. իսկ անկէ ետքը մտային աշխատութիւնով մը հանգչիլը: Խիստ օգտակար է գործաւորի մը համար ամէնէն լաւ և հաճելի ժամանցն՝ իրիկունները եւ կիրակի օրերը ամէնէն լաւ գրքեր կարդալն: Այս աշխատութեան ժամանցին մէջ ո՛չ միայն մարմինը ազնիւ զուարճութիւն մը պիտի զգայ, այլ եւ միտքը պիտի բարգաւաճի, հոգին իսկ՝ մարդկութեան բեռ եղող կիրքերէն ազատ՝ աւելի պիտի ազնուանայ: Այս կերպով մարդու մարմինը պիտի զօրանայ եւ միտքը բարձրանայ:

Երաժշտութիւնը առողջութեան մեջ, — Երաժշտութիւնը ո՛ր եւ է կերպով ուղղակի մեր հոգւոյն վրայ ազդելով ո՛չ միայն ամենամեծ վայելքներ կը պարգեւէ, այլ եւ առողջապահիկ յատկութիւններ ալ ունի: Արդարեւ բարքերը մեղմացնելու կարողութեանէն զատ, ջգային գրգռեան վրայ հանդարտեցուցիչ ազդեցութիւն մ'ունի և մարմնոյ գործարաններու շարժումները կը չափաւորէ: Կարծես վիշտերը կ'սփոփէ, տաք ուսպանքները կը մեղմէ, գէշ նախազգացումները կը զսպէ, նոյն իսկ ասկէ հետեւած է եկեղեցիներու մէջ երգելու ու երգէհոն գործածելու սովորութիւնը:

Այսօր ամէն մարդ կ'ընդունի երաժշտութեան ազդեցութիւնը՝ բարուց բարեփոխան վրայ:

Աւստրալիա. — Մարմնական աշխատութիւններու վարժութիւնը առողջութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի, իսկ մտաւորական աշխատութիւնը մարդս արարչագործութեան մէջ կը բարձրացնէ:

Լավուաղիէ հաստատած է թէ աշխատութեան հետեւանքով թողքերը կրկին անգամ աւելի ածխական կազ կ'արտաքսեն: Այս ալ աւելցնենք թէ այդ արտաքսումը եթէ անգործութեան հետեւանքով բաւական տեղի չունենայ՝ մարդ ենթակայ կ'ըլլայ խոլի և թոքատապի:

Ամէն մարդ գիտէ որ մարմնական աշխատութիւնը ցուրտին նէ՛մ կը պահպանէ, արիւնը աւելի արագ շարժելով, մարմնոց ծայրագոյն մասերէն առատութեամբ կ'անցնի: Ո՞վ չէ համոզուած թէ մարմնամարզը մկանունքները կը զօրացնէ, մարսողութիւնը ասով կը դիւրանայ եւ արտաքսումները աւելի առատ եւ աւելի կանոնաւոր

կ'ըլլան: Զգայարանքները միշտ զգայուն կը մնան, եւ իմացականութիւնը եթէ ալքօլական ըմպելիներով փթացած չլ աւելի սուր եւ զօրաւոր կ'ըլլայ:

Անգործութիւն. — Ծուլութիւնը աշխատութեան հակառակը՝ ախորժակը կը գոցէ: Մարմնոյն պէտքերը կը նուազին: Տեսնուած են շատ պարապորդներ՝ որոց ախորժակի պակասութիւնը գրեթէ հիւանդութիւն մը դարձած է, եւ ժամանակ ծը վերջը այս թշուառները ծիրախտի զոհ կ'երթան: Անշուշտ կան ծոյլեր որոնք հակառակ իրենց անգործ վիճակին մեծ ախորժակ ունին, բայց ասոնք միշտ ենթակայ են կաթուածի, սրտի արիւնահոսման եւ շատ մը փոքր անհանգըստութիւններու, սրտի նեղութեան, շնչառութեան դժուարութեան եւայլն:

Անգործ անձերը շուտով կը մսին և արուեստական միջոցներով միայն կը տաքնան: Այս յարաճուն ցրտացումը որ մարմնակոն ծուլութեան արդիւնքն է, յառաջ կը բերէ նաեւ ընդադարութիւն:

1633ին Կրօէնլանտայի Հունգարական ընկերութիւնը, սոյն երկրին կրիմային վերայ ծանօթութիւններ առնելու համար հոն ձգեց եօթը հոգի ու նաւաստի: Ասոնք պէտք եղած ամէն տեսակ նիւթերն ունէին պատրաստ իրենց տրամագրութեան ներքեւ, այնպէս որ սնունդի կողմէ ոչինչ կը պակասէր, բայց զննութիւններուն պատճառած անգործութեան հետեւանքով՝ չկրնալով բռնակալայրին ցուրտին դիմանալ, ամէնքն ալ մեռան ընդադարութենէ: Ասոնք բնաւ օգտուած չեն այն Անգլիացիներուն օրինակէն, որոնք 1630ին մի եւ նոյն սառուցեալ ծովեզերքներուն վրայ նետուեցան՝ ամէն բանէ զուրկ՝ ծովու արկածի մը հետեւանքով: Ասոնք Յուլիոս ամիսէն մինչեւ յաջորդ Մայիս ամիսը միայն իրենց աշխատութեամբ ձեռք ձգածներն ունենալով՝ ամէնքն ալ ընդադարութենէ զերծ մնացին եւ ողջ առողջ ապատեցան: Այս Անգլիացիք ո՛չ հաց, ո՛չ պաքսիմատ ունէին, ոգելից բովելիքներէ բոլորովին զուրկ՝ ջուր միայն կը խմէին եւ իրենց սպաննած արջու, միեղջիկու միտով կ'ապրէին: Պէտքերնին հոգալու համար Անգլիացիք միշտ չարժման մէջ էին. մինչդեռ Հոլանտացիք ուշած պաշարներն ունենալով՝ անգործ մնացին:

Պարսպ կեցող Պարզու մը խնայականութեամբ ալ գէշ ազդեցութիւն մը կը կրէ։ Անգործ մէկը միշտ կը ձանձրանայ. ամէն բան իրեն անապրեբէ է։

Թարգմ. ԶԱՐԵՀ Ն. ՊԵՊԵՐԵԱՆ

### ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Քանիցս կրկնեցինք, եւ այս անգամ կարմրելով կը յիշեցնենք մեր յարգելի բաժանորդներուն՝ ջրոնք դեռ բաժնեգրիներնին չեն վճարած՝ բարեխղճութիւն ունենալով վճարելու։ Նոյնպէս կը խնդրեք մեր Մեծ. Գործակալներէ որ շնորհ ընեն հաշիւները կարգի դրելու։

Փ Ո Ր Դ Ն

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԿԻՁԲԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ք Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ւ Ք Ն

ԳԼՈՒԽ Թ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ. — ՆԱԽՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

(Շար. 28րդ քիւրս)

Լիկուրքոս արգիլեց շուայլութիւնը, գեղխութիւնը, վաճառականութիւնը, ոսկեկեղէն և արծաթեղէն դրամը, և որպէս զի պարտաւորէ իր հայրենակիցները, սակաւապետ կերպով ապրելու, հաստատեց հասարակաց սեղանը, ուր կը ճաշէին ազնուականէն սկսեալ մինչեւ հետին քաղաքացին կամ շինականը, մի և նոյն կերակուրը ուտելով ամէնքը միասին։ Սպարտացի տղաքները քաւելի աէրութեան քան ծնողաց կը վերաբերէին։ Տձև ծնած տղաքները մահուան կը դատաւիճեցուէին Տայքէսի անդռնիդը նետով լուծելով։ Իսկ միացեալ առողջ մանչերուն ու կայսառ տղջիկներուն հարմար ալ սահմանուած էին խոտաճոյն ունիլով։

Նաւարդական հրանձնիկներ, որք անծնց մարմնոյն կորովաճոյժ ու ճկունութիւն կրնա ծայէին։ Հուգորիկեան օրէնքներն Սպարտացի երկսեռ տղայոց կամ սերունդին երկու բան աւելի ներշնչեցին ու ներգործեցին անոնց բնաւորութեան վրայ, և ասոնք էին տալ յարգանք և ակնածանք թէ՛ ծերերուն և թէ՛ օրէնքներուն, տոկոս վիշտի տառապանքի ու արհամարհել անհն։

Մեսենական պատերազմներ (743-669). — Սպարտա այս ազգու վերանորոգման հզօրացած Լակոնիան տմրոջ՝ դրաւեց, իւրացուց և սկսաւ Պեղպոնէսի գրաւումը յարձակելով Մեսինացւոց վրայ։ Մեսենական պատերազմներն երկուք են, նսնոցմէ մին տեւեց 20 տարի (743-723), միւսը՝ 17 տարի (685-668)։ Առաջինին մէջ Մեսենացւոց թագաւորը Արիստոտէմոսը տաւրի շարժական պաշտպանեց, իթոմ լեռը, Մեսենացիք այդ լեռան մէջ ամրացած դիւցազնօրէն կը դիմադրէին Լակեդէմոնացւոց։ Երկրորդ Մեսենական պատերազմը նշանաւոր է Մեսենացւոց իշխան Արիստոմէնի առասպելական քաջագործութիւններովը, Մեսենացի այս արիասիրտ իշխանը կը ջախջախէ Սպարտացիները. գիշերանց կը մտնէ անոնց քաղաքը, և անոնց տաճարներէն միոյն պատէն վար կը կախէ թշնամոյն ձեռքէն խլած կողոպուտներէն շինած յաղթանակի դարդ մը։ Տիրաւոր ի զուր կարծարծէ Լակեդէմոնացւոց քաջութիւնը։ Արիստոմէն գերի բռնուի կը յաջողի փախչելու, թէեւ յաղթուած բայց կը քաջուի իրաւեռը ուր ինքզինք կը պաշտպանէ 11 տարի, և, երբ կատաղիի դայն թշնամոյն թողուլ, յետոյ նուաճող Մեսենացիք գնացին հիմնել Չանգլը Սիկիլիոյ մէջ (Արդի Սիկիլիան)։ Տասնութեցորդ դարուն Սպարտացիները նկատուած էին իբրեւ առաջին ժողովուրդն Յունաստանի, և իրօք ալ ամենէն աւելի ահարկու էին։

Աթէնք և ՍՈՂՈՆ (594). — Սպարտացիները յարձակեցան Ատտիկէի վրայ։ Կողբողի մահէն յետոյ անմիջապէս հաղթատուեցաւ (արիստոգորութիւնը) նախարարութիւնը, որուն պաշտօնավարութիւնը 683 ին. և այն ատեն ինն Մագիստրոսներէ կը բաղկանար նորահաստատ իշխանութիւնը։ Տրակոնեան

օրէնսդրութիւնը որ Մահուամբ կը պատժէր ամեն յանցանք, չընդունուեցաւ և ընդդիմութիւնը չարունակեցին: Սողոն յանձն առնելով երկրին օրէնքը վերանորոգելու, դիւրացուց նախ պարտքերուն վճարումը, յետոյ բաժնեց ժողովուրդը չորս դասերու իրենց նիւթական կարողութեան համեմատ: Առաջին երեք դասերուն քաղաքացիները միմիայն կրնային հասարակաց պաշտօնի կոչուիլ, բայց ամենքն ալ ներկայ կը լինէին ժողովուրդին ընդհանուր ժողովներուն և ամբողջ ունէին դատարաններուն մէջ, ինչն Արխոնները գերագոյն Մագիստրոսներ (Մեծ նախարարներ) գինուորական պաշտօն չէին կրնար վարել: Ծերակոյսը կը բաղկանար 400 անդամներէ, որոնք փութաբար կ'ընտրուէին երեք առաջին դասու քաղաքացիներէն, և խիստ փորձի մը կ'ենթարկուէին: Ժողովուրդը կը հաստատէր օրէնքը և կ'անուանէր պաշտօնեաները, կը խորհրդակցէր Պետական գործոց վրայ, և ինքը կը տեսնէր մեծամեծ դատերը: Արիսպագոսը՝ որ պաշտօնէ ելած հին արխոններէ կը բաղկանար, վերին հսկողութիւն ի գործ կը դնէր երկրին բարուց և Մագիստրոսներուն ընթացից վրայ, կրնար բեկանել ժողովուրդին տուած վճիռները: Սողոն իր հաստատած օրինաց մէջ քաջալերեց աշխատութիւնը, և Լիկուրգոսի նման քաղաքացւոյն չի գոհեց մարդը և ոչ բարոյականը՝ քաղաքականութեան կամ աշխարհավարութեան:

ՊԻՍԻՍՏՐԱՏԵՍԻՖ:—Սողոն՝ իր օրէնքներն ընդունել տալէն յետոյ, հեռացաւ երկրէն: Երբ վերադարձաւ 565 ին, գտած Աթէնքը ինքզինքը յանձնած էր Պիսիստրատոսի, որուն իշխանութեան լուծը թէ և քաղցր էր, և միանգամայն դպրութեանց ու արուեստից բարեկամ: Պիսիստրատոս երկու անգամ պաշտօնի կոչուելով վարեց սիրապետական իշխանութիւնը մինչեւ իր մահ:

Պիսիստրատոսի երկու որդիքը՝ Հիպպարգոս ու Հիպպիաս, իրենց հօրը յաջորդեցին (528)։ Բայց առաջինը Հարմոտիոսի և Արիստոգիտոսի ձեռք կ'անկանի արեւէ. 514 ին, երկրորդը խիստ կերպով կը վարէ պաշտօնը: Ստրպուելով Հիպպիաս Աթէնքէն փախչիլ, գրգռեց Պարսիկները Յունաստանի վրայ յարձակիլ:

ԳԻՈՒԽ Ժ.

ՄԱՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ (490-449)

ԱՄԻԱԿԱՆ ՅՈՅՆԵՐԸ (500).

Ասիոյ Յոյներն որք կիւրոմէն ի վեր Պարսից հպատակ էին, փորձելով վերստին ձեռք ձգել իրենց ազիկամի վարչութիւնը, Մելէդ Աթենական գաղթականութիւնը՝ իր մայրաքաղաքէն աջակցութիւն խնդրեց: Աթէնք տուաւ նաւեր և զուէր մը զօրք: Որով Մելէդցիք գրաւեցին Սանդիկէն և հրդեհեցին զայն (500)։ սակայն Մելէդ նորէն Պարսից հպատակեցաւ: Երբ Ասիոյ բոլոր քաղաքները նուաճուեցան, Պարսկական բանակ մը Մարտոնիոսի հրամանատարութեամբ անցաւ Եւրոպա պատժելու համար Յունաց ձեռնտու դաշնակիցները:

ՄԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. Մարաքոն (490)։ Պարսկական նաւատորմը ամբողջ լերան մօտ փոթորիկէ մը փճանալով, Մարտոնիոս պարտաւորուեցաւ Ասիա վերադառնալ: Երկրորդ արշաւանք մը Հիպպիոսի առաջնորդութեամբ հպատակեցուց Դիլատեսները 100,000, Պարսիկներ Մարաթոն հանեց, ուր 10,000 Աթենացիք և 1000 Պղատէացիք Միլդիատէոսի հրամանատարութեամբ փրկեցին իրենց երկրի ապահովութիւնը և աշխարհին քաղաքակրթութիւնը: Հիպպիոս ռազմադաշտին վրայ դիտապաստ ինկաւ: Միլդիատէս ստանձնելով Դիլատեսինց նուաճումն ու հպատակումը, Պարոսի առջեւ յաղթուեցան: Այս պարտութիւնը մատնութեան վերագրելով գաղտնաբարեցին դիւցապիստիրոս զօրավարն Միլդիատէս այնպիսի ծանր տուգանքի մը, զոր վճարել չի կարենալուն համար բռնտին մէջ մեռաւ առած վերքերէն բոլորովին ընկճուած: Թէմիստոկլէս յայնժամ ձեռք ձգեց երկրին վրայ գլխաւոր ազդեցութիւն բանեցնելու գինուորական իշխանութիւնը և Պարսկական նոր պատերազմի նախատեսութեամբ Աթէնքի բոլոր ուժերն ու հասութեանքը գործածեց նաւատորմիդը բազմապատկելու:

Մարական երկրորդ պատերազմ. Սաղամիս (480)։— Քսերքսէս Դարեհի յաջորդը, 485 ին, 1,000,000 մարդոց և 1,200

| ՀԱՆՐԱԳԻՏՈՒԿ ևր հրատարակուի ամսն ամսոյ 1ին, 10ին և 20ին |  |                   |                       |
|--------------------------------------------------------|--|-------------------|-----------------------|
| Գ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ                                        |  | ՀԱՄԱՅԷ            | ԳԱՍԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ      |
| Տարեկանը 40 դահեկան                                    |  | ՆՇԱՆ Գ. ՊԵՐՊԵՐԵԱՆ | Տարեկանը 45 դահեկան   |
| Վեցամսեան 20 »                                         |  |                   | Վեցամսեան 25 »        |
| Եռամսեան 10 »                                          |  | Գ. ՊՈԼԻՍ          | Եռամսեան 12 1/2 »     |
| ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ                                          |  | ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ   | ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ |
| Տարեկանը 4 ըռալլի                                      |  | ԹԻԼ 38            | Տարեկանը 10 Ֆրանք     |

Ձեռքի կր ծախսի համար 40 փաթույթ

4. Գոյիս Գաւ-Արի ճառսկսի քիւ 38

Պապ Ալի Ճատտէսի, Թիւ 38, Իզտամ լըազրի դէմը.

# ՏԵՐԻՏՈՐԻԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

### ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

### ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

### ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



### ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱՆԻ ՀԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 38. ԻՂՏՍՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՅ

Ստացած է տպագրական հոդ

կազմակերպութիւններ

եւ կը սպագրէ ամեն  
սեսակ գիրքեր, ման-

ազրեր, հանդեսներ, քաղաքականներ, հասարակական հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-  
ցաբարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն սեսակ պիտոյներ: — Տպագրութիւն ստիպական  
2000 Ե աւելի պատկերները յանձնարարական տրամադրութեան տակ են ձեռն:

Անմիջեւի մաքրութիւն եւ նշանակաւորութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն  
մասնակցողները պարտին սոյն կարոնը կարելով՝ իրենց գը-  
րութեանց հետ զրիւլ իմրադրութեան, հակառակ պարա-  
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հաստ  
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Կ. Պոլիս, Պապ ալի ճատէսի, ԹԻՒ 38. در سعادت باب على جاده سنده نومرو ۸۳

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե Յ ԻՍՍԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ և թէ օր ըստ օրէ  
հարնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմիջեւի ածանութեամբ  
գողացում տալ նոյն իսկ էն խոտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե ԻՍՍ-  
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կ'  
կատարուին ամենայն ճշդութեամբ:

Աժան, ընտիր ու հօտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-  
ղամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Ե Ե. ԻՍՍԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի  
կից ԹԻՒ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն

Ա Ժ Ա Ն